ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ (LACPW)՝ ԿՈՅՈՒՂՈՒ ՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԻԱՎՈՐՎԱԾ ՇՐՋԱՆ

LACPW-Ի ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑԵՐ

Ի՞նչ է Լոս Անջելես վարչական շրջանի Հանրային ծառայությունների վարչության՝ Կոյուղու տեխսպասարկման միավորված շրջանը, յ ո՞ւմ են նրանք սպասարկում:

Լոս Անջելես վարչական շրջանի Կոյուղու տեխսպասարկման միավորված շրջանը (CSMD) կառավարվում է Լոս Անջելեսի Հանրային ծառայությունների վարչության կողմից: Շրջանի համակարգը սպասարկում է ավելի քան 500 000 հողակտոր և ավելի քան 2 միլիոն բնակչություն վարչական շրջանի չընդգրկված տարածքներում (Մարինա դել Ռեյը ներառված չէ), 37 քաղաք և 2 պայմանագրային քաղաք: Շրջանի համակարգը ներառում է ավելի քան 4600 մղոն կենցաղային կոյուղի, 87 պոմպակայան և կեղտաջրերի մաքրման 4 կայան: Համակարգի գնահատված արժեքը կազմում է ավելի քան 1,5 միլիարդ դոլար:

Կոյուղու տեխսպասարկման ինչպիսի՞ ծառայություններ է մատուցում Հանրային ծառայությունների վարչությունը հարկատուներին:

Հանրային ծառայությունների վարչությունը մատուցում է կոյուղու տեխսպասարկման ծառայությունների լայն տեսականի՝ բարձր արդյունավետ, ազդեցիկ և պատասխանատու ձևով պաշտպանելու հանրությանը և շրջակա միջավայրը: Հանրային ծառայությունների վարչության կողմից մատուցվող ծառայությունները ներկայացված են ստորև բերված ցանկերում.

ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՏԵԽՍՊԱՍԱՐԿՈՒՄ

- Ծառայությունների մատուցման հայցեր՝ կապված կոյուղու հոտի, աղմկոտ դիտահորերի, միջատների և այլնի հետ:
- Տեսադիտարկման ստուգումներ
- Նորմատիվային պահանջների համապատասխանություն
- Կոյուղու դիտահորերի ստուգումներ
- Կոյուղագծերի մաքրում
- Կոյուղաթամբերի տեղադրում
- Պոմպակայանների շահագործում, տեխսպասարկում և ստուգում

ԿԱՊԻՏԱԼ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ՎԻՃԱԿԻ ՀԱՄԱԽԱՌՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

- Կոյուղու ցանցի և պոմպակայանների վերանորոգում/վերականգնում/փոխարինում
- Գեոինֆորմացիոն համակարգի քարտեզագրում
- Պլանի դիտարկում տեխսպասարկման կարիքների համար
- Փակ պարագծով տեսահսկման համակարգի վիճակի գնահատման ծրագիր
- Մասնավոր պայմանագիր (ՄՊ)/Նոր կոյուղու ընդունման ստուգում

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ 24-ԺԱՄՅԱ ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՅՑ

- Կենցաղային կոյուղու վարարումներ
- Ծառայությունների մատուցման հայցեր՝ կապված կոյուղու հոտի, աղմկոտ դիտահորերի, միջատների և այլնի հետ:
- Կենցաղային կոյուղու խցանումներ կամ դիտահորերից կոյուղաջրերի արտահոսքեր
- Պոմպակայանների անսարքություններ

Ես երբեք չեմ նկատել, որ Հանրային ծառայությունների վարչությունն իրականացնում է այս ծառայություններն իմ տարածքում; ինչո՞ւ է անհրաժեշտ կոյուղու տեխսպասարկումը:

Երբ կոյուղագծերը պատշաճ կերպով սպասարկվում են, հաճախորդները հիմնականում չեն նկատում տեխսպասարկման ծառայությունները: Կոյուղու պատշաճ տեխսպասարկումը էական նշանակություն ունի հասարակության և շրջակա միջավայրի անվտանգության ապահովման համար և ուղղակիորեն ազդում է հանրային առողջության, հանգստի գոտիների, բնական տարածքների, ենթակառուցվածքների և տեղական ձեռնարկութունների վրա:

Ի՞նչ դեր են խաղում կոյուղու տեխսպասարկման այս ծառայությունները մեր հասարակությունում:

Անկախ նրանից՝ մենք դա գիտակցում ենք, թե ոչ, գործող կոյուղու համակարգը կենսական նշանակություն ունի մաքուր միջավայրի և առողջ հասարակության համար, քանի որ այն թույլ է տալիս մարդկանց ապրել, ճանապարհորդել և աշխատել քաղաքներում՝ առանց անհանգստանալու կոյուղաջրերի արտահոսքի մասին: Երբ կոյուղու համակարգերը պատշաճ կերպով չեն սպասարկվում, դա կարող է խցանումներ, հեղեղումներ և աղտոտում առաջացնել: Հանրային աշխատանքների վարչությունը կոյուղու տեխսպասարկման ծառայություններ է մատուցում՝ նպատակ ունենալով պաշտպանել հանրային առողջությունը և շրջակա միջավայրը և ապահովել մեր համայնքների անվտանգությունը:

Որտե՞ղ կարող եմ գտնել կոյուղու տեխսպասարկման ծառայությունների համար իմ ընթացիկ դրույքաչափը/վճարը:

Դուք կարող եք գտնել կոյուղու տեխսպասարկման ձեր ընթացիկ դրույքաչափը ձեր գույքահարկի ամփոփագրում:

Ո՞ւմ կարող եմ դիմել կոյուղու հետ կապված խնդիրների (հոտերի, խավարասերների/կրծողների հարձակման, կոյուղու խցանումների, դիտահորի չամրացված կափարիչի ֆ այլնի) դեպքում:

Եթե ձեր գույքը գտնվում է Լոս Անջելես վարչական շրջանի չընդգրկված տարածքներում կամ Կոյուղու տեխսպասարկման միավորված շրջանի անդամ-քաղաքում, կարող եք օգնություն խնդրել կամ հայտնել կոյուղու խնդրի մասին առցանց կամ զանգահարելով (800) 675-HELP հեռախոսահամարով: Հանրային աշխատանքների վարչությունը հասանելի է այս հեռախոսահամարով 24 ժամ շաբաթը 7 օր:

Արտակարգ իրավիճակների դեպքում, ինչպիսիք են կոյուղաջրերի խցանումը/արտահոսքերը, խնդրում ենք անմիջապես զանգահարել (800) 675-HELP հեռախոսահամարով:

Սպասարկման տարածքում ընդգրկված քաղաքների ցանկը՝ dpw.lacounty.gov/smd/smd

Որտե՞ղ կարող եմ ավելին իմանալ Հանրային ծառայությունների վարչության՝ կոյուղու տեխսպասարկման ծառայությունների մասին:

Իմացեք ավելին՝ այցելելով Հանրային ծառայությունների վարչության՝ Կոյուղու տեխսպասարկման միավորված շրջանի կայքէջը՝ pw.lacounty.gov/smd/smd